ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 4805-Ա «28» նոյեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԱՋԱՓՆՅԱԿ, ԼՈՒԿԱՇԻՆԻ ՓՈՂՈՑ Հ.51/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՈՐԱՅՐ ՀՐԱՅԼԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Նորայր Հրայլիկի Առաքելյանի (ծնված 12.08.1972թ.) 03.04.2023թ. հ.Դ-39723-23 դիմումը: Երևանի Աջափնյակ, Լուկաշինի փողոց հ.51/2 հասցեում գտնվող ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 227.29քմ, որից 109.87քմ մակերեսով հողամասը Նորայր Հրայլիկի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.13092022-01-0343 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 28.06.2023թ. հ.ԱՏ-28062023-01-1124 տեղեկանքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 27.12.2023թ. հ.Հ-17047 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 26.11.2025թ. հ.20-Ել-39723 եզրակացությունը, համաձայն որի Երևանի Աջափնյակ, Լուկաշինի փողոց հ.51/2 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևանի Աջափնյակ, Լուկաշինի փողոց հ.51/2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Նորայր Հրայլիկի Առաքելյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 109.87քմ մակերեսով հողամասին կից 117.42քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 117.42քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, Երևան քաղաքի Աջափնյակ, Լուկաշինի փողոց հ.51/2 հասցեում գտնվող 227.29քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ